

Որ մարդ որ գիւււ կը բանայ էն գեախ Խանտիւթ խաթիւն կը դարկի, էն մարդ կոպանի:

277. Էն գեախ Գաւիթ կը կանգնը, կըսի.

— Իս գիւււ տը բանամ, տ'երթամ ներս. թը Խանտիւթ խաթիւն ըծը սպանի:

Գաւիթ գիւււ ղեօռովէն կը բանայ, կերթայ նիրս:

278. Խանտիւթ խաթիւն կրիշկի, տիսաւ մէկ մարդ էրի:

Շան կարիճ մարդ ի, խնր խօրսա ի:

Էսաց. — Է՛յ մարդ, ըիւ անուն ինչ ի.

Էսաց. — Իմ անուն Գաւիթ ի:

Էսաց. — Գաւիթ, յետե նսաի: Տեղ շանց տուից:

279. Գաւիթ ղեօռով գինաց, ձեռ թլից Խանտիւթ խաթիւնի գլեօխ, գրկից, էնու իրիս մէկ զայիմ պագնից:

Սկօն պագնից, էնու ըրնը տեղ կոպտացաւ:

Խանտիւթ խաթիւն ըաքիաւ:

Մէկ շամառ մի էնու իրիսին գարկից:

Գաւիթն էլ ըսքիաւ, ըլաւ, էկաւ յեօղէն:

Էն մարդիրուն մօտ նսաւ:

280. Չէ՛, վուր Գաւիթ գինաց խանտիւթ խաթիւնի մօտ.

Էդա քեառսուն մարդ մէ մէկու ըսին.

— Գաւիթ Խանտիւթ խաթիւն մի ձեռնէն տ'առնի. է՛, ըպա ինչ էնինք:

Յըմեն մէկ ձի թուր քեշէք, զրէք ձի թաղսը տակ, նսաէք

վերայ:

Վուր մութ կտայ, էդա մարդ կը ըքնի.

Ըլինք, գանինք սպանինք:

281. Գաւիթ, չէ՛ որ կը նստի յեօղէն,

Կրիշկի կալուն<sup>1</sup> պատից կախուկ ի, սկի՛ թուր չկայ:

Սկնայ կրիշկի, կըսի— Էդա թրիւր վրէ՞ պախնն:

Ո՛ր մէկ տեղ կրիշկի, թրիւր չտիսնայ:

282. Ձեռ կտայ թաղսըն, կրիշկի թաղսը տակ.

Մէկ թուր էն տե կը տիսնայ, թուր կը վերցի:

Թաղս կը վրցի, կրիշկի թրիւր յըմեն էլ կը տիսնայ, թրիւր յըմեն կը ժողուի.

Յըմեն իրարիւ վերայ կը դնի, կուտուի.

Կը դնի կտուրքիւ խորճին, կըսի.

— Տանիմ, ըծը խամար էնիմ նալ, բիվեռ, իմ ձեան պակաս ի:

Ձխորճու բերան կը կուպղը<sup>2</sup>, կը դնի էն տե:

283. Էդա քեառսուն մարդ մէկ մէկը իրիս կրիշկի:

1 Թրք—Պատեան:

2 Կողպիլ: